

**ՓՐՈՑ. ՏՔԹ. ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆ**

Տնօրեն Չօրեան Հիմնարկի Ցեղասպանութեան Ուսումնասիրութեանց  
Արտասահմանեան Անդամ Հայաստանի Գիտութիւններու  
Ակադեմիայի

**ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՄԱՍԻՆ**

**ԳԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԿԵԳՐՈՆԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՉ  
14 ՆՈՅԵՄԲԵՐ 2003  
ՊՈԻԷՆՈՍ ԱՅՐԷՍ**

**ՄԱՅՐԵՆԻ - 2004**

## ԱՎՆԱՐԿՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այսօր պիտի աշխատիմ բացատրել Հայկական Ցեղասպանությունը հետեւեալ չորս ստորաբաժանումներով՝

- Հայկական Ցեղասպանութեան ընկերային եւ պատմական ազդակները
- Հայկական Ցեղասպանութեան իսկական գործարարությունը
- Թրքական ուրացումները
- Ինչ եւ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հեռանակարները

### Ներածական

Իմ կարծիքովս, շատ դժուար է հասկնալ Հայկական Ցեղասպանությունը՝ առանց ըմբռնելու պատմական զարգացումը, պատմական հոլովոյթները, որոնք հասունցուցին եւ հողը պատրաստեցին Հայկական Ցեղասպանութեան:

Ինչպէս գիտէք, Օսմանեան Կայսրությունը աստուածապետական կայսրութիւն մըն էր՝ *թէոգրասի*: Բայց կան *թէոգրասիի* տեսակներ, ինչպէս՝ քրիստոնէայ աստուածապետութիւնը. այսինքն՝ քրիստոնէականը: Օսմանեանի պարագային ամէնէն յատկանշականը այն էր, որ ան իսլամական աստուածապետութիւն մըն էր. հետեւաբար, Իսլամ կրօնքը եւ իսլամական կրօնքի տոկմաները եղան Օսմանեան Կայսրութեան ծագման եւ զարգացման մղիչ ուժերէն մին եւ, իմ կարծիքով, Օսմանեան աստուածապետական Կայսրութեան այդ իսլամական բնոյթը մեծ դեր խաղաց Հայկական Ցեղասպանութեան զարգացման մէջ:

## ՓՐՈՖ. ՏՔԹ. ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆ

Նախ եւ առաջ ուշագրաւ հարց մը կը ծագի հոս: Ինչպէս գիտէք, հայեր դարերով ապրած են ուրիշ իսլամական կայսրութիւններու մէջ,- Պարսկաստան, արաբական երկիրներ,- եւ արդարօրէն կարելի է հարց տալ, որ ինչո՞ւ նոյն այդ երկիրներուն մէջ, ուր իսլամական կրօնքը կը տիրապետէ, զանգուածային ջարդ եւ կոտորած չէ եղած: Օսմանեան Կայսրութեան պարագային, իսլամական կրօնքին զուգընթաց կար նաեւ ուրիշ ազդակ մը, որ էր ռազմաշունչ իսլամ պետականութիւնը:

Ինչպէս գիտէք, Օսմանեան Կայսրութիւնը ռազմական ծաւալապաշտութեան մը վրայ հիմնուած է,- շարունակ, շարունակ երկիրներ գրաւել եւ իբրեւ նուաճեալ տարր օգտուիլ տեղական ժողովուրդներէն:

Յետոյ, անշուշտ, Օսմանեան Կայսրութեան պարագային կար ուրիշ հանգամանք մը, որ բացակայ էր Պարսկաստանի, արաբական երկիրներու, Լիբանանի եւ Սուրիոյ մէջ,- հայ ժողովուրդի բնօրրանը մաս կը կազմէր թուրք ազգի կազմաւորման, թուրք ազգութեան աշխարհագրական դիրքին. կար հարիրաւոր հազարներ ընդգրկող կեդրոնացած հայ ազգաբնակչութիւն մը, որ աշխարհագրականօրէն եւ ռազմա-քաղաքականօրէն կը սպառնար թուրք ժողովուրդի աշխարհագրական դիրքին: Հետեւաբար, այս ազդակները միասնաբար դեր մը խաղալով մղեցին, որ այդ իսլամական բնոյթը վնասակար դեր կատարէ հայ եւ թուրք յարաբերութիւններու մէջ:

Իսլամական կրօնքը երբեք չ'ընդունիր ոչ-իսլամներու հաւասար ըլլալը իսլամներու: Անհաւասարութեան պարագան հիմնաքարը կը կազմէ իսլամական կայսրութեան. բայց ստոր կողքին կար նաեւ ուրիշ ազդակ մը,- հայերը ո՛չ միայն անհաւասար էին իսլամներու, այլեւ կը կազմէին ստորադաս ժողովուրդ մը: Այս ստորադասութիւնը աղէտ մը

## ԱՎՆԱՐԿՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

դարձաւ հայ ժողովուրդին համար, որովհետեւ այդ ստորադասութեան կողքին կար նաեւ խտրականութիւն: Հայերը չէին կրնար հաւասար իրաւունքներ վայելել, կառավարական պաշտօնեայ չէին կրնար ըլլալ, զինուորական չէին կրնար ըլլալ:

Իմ կարծիքով, սակայն, հայ ժողովուրդի բնաջնջման ամենամեծ ազդակը հանդիսացաւ իսլամական կրօնքի այն արգելքը, որուն համաձայն քրիստոնէայ հայերը իրաւունք չունէին զէնք կրելու կամ զինուելու:

Հինգ հարիւր տարի թրքահայ ժողովուրդին մէջ այս անպաշտպանութիւնը, այս զէնք կրելու իրաւունքէն զրկուած ըլլալը, անհանդուրժելի պայմաններ ստեղծեցին արեւելեան նահագներուն մէջ, ուր մինչեւ ատամները զինուած քիւրտեր եւ թուրքեր շարունակ կը սպառնային հայերու, կը բռնաբարէին ու կը կողոպտէին զէնքէ զրկուած հայերը, եւ հայերը ստիպուած էին ենթարկուիլ: Երբ դուք դարերով այս պայմաններուն մէջ ապրիք, ենթարկուիլը վերապրելու միջոց մը կ'ըլլայ, որովհետեւ երբ քիւրտերը յանկարծ կը յարձակին գիւղին վրայ եւ դուք ուզէք առանց զէնքի ինքնապաշտպանուիլ, դատապարտուած կ'ըլլաք սպաննուելու:

Ուրեմն վերապրելու, գոյատեւելու համար, հայերը որդեգրեցին ենթարկուելու այդ հոգեբանութիւնը: Ենթարկուած վիճակով ապրելու այս հարկադրանքը դարեր շարունակ հայ ժողովուրդի նահանգներուն, մա՛նաւանդ գիւղերուն մէջ անհանդուրժելի կացութիւն մը ստեղծեց եւ դարեր շարունակ տեսած արտագաղթը ասոր մէկ հետեւանքն էր: Այլապէս, ինչո՞ւ պէտք պիտի ըլլար որ հայերը գաղթէին Վանէն, Մուշէն ու Պիթիխէն դէպի Իզմիր, Իսթանպուլ, Պալքանեան երկիրներ, Ֆրանսա եւ Ամերիկա:

Այս դժնդակ պայմաններուն մէջ, ուր արտաքին աշխարհէն տարանջատուած եւ բոլորովին մեկուսացած «անհա-

## ՓՐՈՖ. ՏՔԹ. ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆ

ւատ» հայերու համար արդարակորով դատի ու դատաստանի պայմանները անգոյ էին, Արմենական, Հնչակեան եւ Դաշնակցական մարտաշունչ պայքարները՝ թէեւ մեծ մասամբ հազուագիւտ անձնագոհի հերոսութեան մարմնացումներ՝ սակայն եւ այնպէս դժբախտաբար դատապարտուած էին վերջնական ձախողութեան: Նկատի ունենալով համիտեան հետագայ ջարդերը, կարելի է նոյնիսկ ըսել որ անոնք հանդիսացան ահաւոր վիժում մը:

### **Համիտեան Չարդերը Իբրեւ Նախափորձ Ապագայի Հայկական Ցեղասպանութեան**

Ուրեմն այս պայմաններուն մէջ էր որ հայ ժողովուրդը սկսաւ ձայն բարձրացնել, որովհետեւ նկատեց որ ուրիշ քրիստոնէայ ազգեր՝ Պալքանեան թերակղզիի պուլկարները, յոյներն ու սլաւները ապստամբեցան կայսրութեան դէմ եւ կրցան ձերբազատուիլ օսմանեան լուծէն: Եւ երբ հայերը նոյնպէս փորձեցին ձերբազատուիլ օսմանեան լուծէն, պատահեցաւ անխուսափելին. տեղի ունեցաւ Ապտուլ Համիտի շրջանի ջարդերու շարքին առաջինը, որ էր Սասունի կոտորածը 1894ի Օգոստոսին:

Եւ եթէ դուք ուսումնասիրէք թէ ինչո՞ւ Սասունի ժողովուրդին մէկ մասը ապստամբեցաւ, կը յանգիք այդ հալածանքին եւ անտանելի պայմաններուն, որովհետեւ Սասունի մէջ հայերը ստիպուած էին տուրք վճարել ո՛չ միայն օսմանեան կեդրոնական կառավարութեան, այլեւ՝ քիւրտերուն: Քիւրտերն սկսան ըսել թէ իրենց ալ տուրք պէտք է վճարուէր եւ հայերը անհանդուրժելիութեան աստիճանի մը հասնելով, ըսին թէ իրենք մէ՛կ հարկահաւաքի կը վճարեն՝ կա՛մ քիւրտերուն եւ կամ կառավարութեան: Ասոր վրայ էր